

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 451-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

----- 2020 թ. № ----- Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 12-Ի N 451-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի
ապրիլի 12-ի «Գիտության և կրթության բնագավառներում նշանակալի
նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր գինվորական
ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները
սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002
թվականի օգոստոսի 29-ի N 1394-Ն և 2015 թվականի փետրվարի 5-ի N
117-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև
Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի
հունվարի 13-ի N 15 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 451-Ն
որոշման հավելվածի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Սույն կարգի համաձայն գիտության և կրթության բնագավառներում
նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացուն յուրաքանչյուր կրթական
ծրագրով ուսումնառության համար տարկետում կարող է տրվել մեկ անգամ,
ընդ որում, սույն կարգի 7-րդ կամ 8-րդ կետերի հիման վրա տրված
տարկետման ընթացքում, սակայն ոչ ավելի քան մինչև համապատասխան
կրթական ծրագրով երկրորդ կուրս տեղափոխվելը, քաղաքացին կարող է դիմել
սույն կարգի 9.1-ին կետի հիման վրա տարկետում ստանալու համար:

Քաղաքացու ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրության և հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն ստանալու դեպքում վերջինս կարող է օգտվել տարկետման իրավունքից՝ մինչև նոր ուսումնական հաստատությունում ուսումնառության ավարտը, բացառությամբ սույն կարգի 14-րդ կետով նախատեսված դեպքի:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից: